Հ Ա Ս Տ Ա Տ Վ Ա Ծ Է

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի
գիտական խորհրդի 11.07.2018 թ.
թիվ 4 նիստում

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի
գիտական խորհրդի նախագահ,
ոստիկանության գեներալ-լեյտենանտ

ՀՈՎՀ. ՎԱՐՅԱՆ

<< >>_____ 2018 թ.

ԿԱՐԳ

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐՈՒՄ ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն կարգը սահմանում է սովորողների, դասախոսների, աշխատակիցների (ծառայողների) կողմից իրականացվող հարցումների առարկան, հարցումներին ներկայացվող պահանջները, նպատակները, հարցումների անցկացման կարգը և պարբերականությունը ՀՀ ոստիկանության կրթահամալիրում (այսուհետ՝ Կրթահամալիր):

1.2. Առաջնայնության կարգով հարցումները բաժանվում են 3 հիմնական խմբերի.

1) Հարցումներ՝ կրթահամալիրի ստորաբաժանումների կրթության որակի բարելավման համար, որոնք անցկացվում են կրթության որակի ապահովման համակարգի շրջանակներում, կրթական գործընթացի իրավիճակի բազմակողմանի ուսումնասիրության, շահառուների և սպառողների բավարարվածության նպատակով:
2) Գիտական ուղղվածություն ունեցող հարցումներ, կազմակերպված կրթահամալիրի ամբիոնների պրոֆեսորադասախոսական աձնակազմի, հետազոտական ծրագրերի ղեկավարների, այլ կազմակերպությունների ներկայացուցիչների կողմից (եթե կան այդպիսիք), որոնք իրականացնում են իրենց հետազոտական աշխատանքները:
3) Կուրսային, մագիստրոսական ատենախոսության աշխատանքների և ուսումնական պրակտիկայի շրջանակներում իրականացվող հետազոտություններ՝ սովորողների կողմից:

1.3. Կարգի դրույթները կիրառելի են կրթահամալիրի կառուցվածքային ստորաբաժանումների, գիտահետազոտական աշխատանք իրականացնող անձնակազմի, սովորողների կողմից նախաձեռնած հարցումների նկատմամբ:

1.4. Հարցումների նպատակն է կրթահամալիրում ուսումնական և կրթական գործընթացից սովորողների բավարարվածության աստիճանի մշտադիտարկումը:

1.5. Հարցումների գլխավոր պահանջներն են.

1) Հարցումների բովանդակության համապատասխանությունը Կրթահամալիրի գերակա նպատակներին և խնդիրներին,
2) Մասնակցության գաղտնիության պահպանումը,
3) Հարցման գործընթացի համակարգվածությունը և պարբերականությունը,
4) Հարցման սահմանված ձևաչափի պահպանումը,
5) Շարունակականությունը,
6) Տեղեկատվական հագեցվածությունը:

1.6. Հարցման ընթացքում ստացած տվյալները կարող են հրատարակվել կրթահամալիրի ղեկավարության թույլտվությամբ՝ պահպանելով հարցման մասնակիցների գաղտնիությունը:

II. ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՀԱՐՑՈՒՄԸ՝ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ

2.1. Տվյալ խմբում ներառված են հարցումներ, որոնք ուղղված են կրթահամալիրի կրթության որակի ապահովմանը՝ կրթության որակի և ուսումնական գործընթացի անմիջական սպառողների բավարվածության աստիճանի պարզաբանմանը:

2.2. Տվյալ հարցումների անցկացման նախաձեռնողը կարող է լինել կրթահամալիրի պետը, պետի տեղակալները, կրթության որակի ապահովման և կրթահամալիրի այլ շահագրգիռ ստորաբաժանումներ:

2.3. Տվյալ հարցումների կազմակերպման և վերլուծությունների իրականացումը ապահովում է Կրթության որակի ապահովման բաժանմունքը նախաձեռնող այլ ստորաբաժանումների հետ համատեղ: Հարցումները անց են կացվում շահագրգիռ ստորաբաժանումների հետաքրքրված ներկայացուցիչների (ֆակուլտետի պետ, ամբիոնների պետ և այլն), ինչպես նաև ուսանողական խորհրդի ներկայացուցչի ներգրավմամբ:

2.4. Կրթության որակի ապահովման համակարգի հարցումները անց են կացվում տարեկան պլանավորման համաձայն յուրաքանչյուր տարի՝ ըստ հրատապության և անհրաժեշտության:

2.5. Ուսումնական տարվա սկզբին Կրթության որակի ապահովման բաժանմունքը կազմում է սովորողների, պրոֆեսորադասախոսական, վարչական անձնակազմի շրջանում կատարվելիք հարցման պլան-ժամանակացույցը: Նրա մեջ մտնում են Կրթության որակի ապահովման բաժանմունքի կողմից ամեն տարի անցկացվող հարցումները, ինչպես նաև ստորաբաժանումների կողմից նախաձեռնվող հետազոտությունները (հարցումները) ընթացիք տարվա կտրվածքով՝ ուսումնական գործընթացի որակի խնդիրները ուսումնասիրելու համար: Նախատեսված հարցումները պլան ժամանակացույցի մեջ ներառելու համար ստորաբաժանումները պետք է նախապես Կրթության որակի ապահովման բաժանմունք ներկայացնեն համապատասխան հարցաշար՝ տվյալ ուստարվա սկզբին /սեպտեմբերի ընթացքում/:

2.6. Յուրաքանչյուր հարցում անցկացնելուց երկու շաբաթ առաջ, Կրթության որակի ապահովման բաժանմունքը համապատասխան ստորաբաժանման ղեկավարին տրամադրում է հարցման հարցաշարը՝ ծանոթանալու համար: Մեկ շաբաթվա ընթացքում ստորաբաժանման ղեկավարը կարող է դիմել Կրթության որակի ապահովման բաժանմունք՝ հարցման վերաբերյալ իր առաջարկների, հարցերի շտկման կամ լրացուցիչ հարցերի ավելացման համար:

2.7. Հարցման համար կազմած պլան-ժամանակացույցը հաստատվում է կրթահամալիրի պետի հրամանով, որը նախապես քննարկվում է ստրատեգիական պլանավորման և որակի ապահովման հանձնաժողովի կողմից:

2.8. Հաստատված պլան-ժամանակացույցով հարցման անցկացման աշխատանքները կարգավորում է Կրթության որակի ապահովման բաժանմունքը:

2.9. Հարցման անցկացումից մեկ շաբաթ առաջ կառուցվածքային ստորաբաժանումները նշանակում են ներկայացուցիչներ, որոնք ապահովում են փոխգործակցությունը հարցմանը ենթակա սովորողների խմբերի հետ: Նրանք պատասխանատու են, որպեսզի նախապես տեղեկատվություն տալ սովորողներին հարցման անցկացման վայրի կամ ձևաչափի, ժամանակի մասին:

2.10. Հարցումներին մասնակցող սովորողները հարցաթերթիկը լրացնում են ինքնուրույն՝ պահպանելով գաղտնիությունը: Պատասխանները տրվում են ըստ հարցաթերթիկը լրացնելու ուղեցույցի: Ներկայացվում է հարցման նպատակը:

2.11. Հարցման մշակումը իրականացվում է Կրթության որակի ապահովման բաժանմունքի մասնագետների, հարցման գործընթացին ներգրավված ստորաբաժանումների և ուսանողական խորհրդի ներկայացուցիչների մասնակցությամբ: Այլ կառույցների կողմից նախաձեռնած հարցման արդյունքների

մշակումը իրականացնում է ստորաբաժանման աշխատանքային խումբը՝ տվյալները ներկայացնելով Կրթության որակի ապահովման բաժանմունք:
2.12. Հարցման արդյունքների վերաբերյալ Կրթության որակի ապահովման բաժանմունքը կազմում է վերլուծական զեկույց /տեղեկանք/:
2.13. Կրթության որակի ապահովման բաժանմունքի ղեկավարը հարցման արդյունքների վերաբերյալ զեկուցում է կրթահամալիրի ստրատեգիական պլանավորման և որակի ապահովման հանձնաժողովի նիստի ժամանակ:
2.14. Հարցման տվյալները հաշվի են առնվում կրթահամալիրում՝ կրթության որակի հետ կապված որոշումների ընդունման ժամանակ:
2.15. Հարցումների արդյունքների տեղեկության օգտագործումը Կրթահամալիրից դուրս սահմանվում է տվյալ ուղղությունը համակարգող կրթահամալիրի պետի տեղակալի կողմից և համաձայնեցվում կրթահամալիրի պետի հետ:
2.16. Հարցաթերթիկները պետք է պահվեն Կրթության որակի ապահևման բաժանմունքում. թղթային տարբերակով՝ մեկ տարվա ընթացքում, էլեկտրոնային տարբերակով՝ 3 տարվա ընթացքում, եթե պահպանման այլ պայմաններ սահմանված չեն:

III. ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

3.1. Սովորողների գիտահետազոտական ոլորտի հարցումները կարող են անցկացվել ամբիոնների, ֆակուլտետների ինչպես նաև կրթահամալիրի այլ ստորաբաժանումների կողմից:
3.2. Սովորողների գիտահետազոտական ոլորտի հարցումների իրականացման համար անհրաժեշտ է ունենալ համաձայնություն կրթահամալիրի գիտական աշխատանքների բաժնի հետ: Համապատասխան համաձայնություն ստանալու նպատակով հետազոտողները կրթահամալիրի գիտական գծով համակարգողին ներկայացնում են զեկուցագիր՝ նշելով հարցման առարկան, անցկացման անհրաժեշտության հիմնավորումը (կարևորությունը, նպատակահարմարությունը), ինչպես նաև երաշխիքներ՝ հետազոտության արդյունքները տրամադրելու մասին: Դիմումին կցվում են նաև հարցման և հարցաթերթիկի հիմնական դրույթները:
3.3. Հարցման ծրագիրը և հարցաթերթիկը անհրաժեշտ է համաձայնեցնել կրթահամալիրի կրթության որակի ապահովման բաժանմունքի հետ, եթե հարցման թեմատիկան վերաբերում է սովորողների բավարարվածությանը և ուսումնական գործընթացի որակի վերլուծությանը:
3.4. Ստացված տեղեկատվության օգտագործումը, կիրառումը և մասսայականացումը կրթահամալիրի ներսում որոշում է գիտական գծով համակարգողը այն ստորաբաժանման ղեկավարի հետ, որտեղ անցկացվել է հարցումը:
3.5. Սովորողների հարցման արդյունքները պարտադիր կարգով ներկայացվում են կրթահամալիրի Կրթության որակի ապահովման բաժանմունք հաշվետվության և կամ աշխատանքային նյութի տեսքով՝ հարցումն անցկացնելուց հետո՝ 10-օրյա ժամկետում:
3.6. Հարցման կազմակերպիչները՝ ստացված արդյունքները կրթահամալիրից դուրս կարող են հրապարակել գիտական գծով համակարգողի և կրթահամալիրի պետի կողմից գրավոր թույլտվության դեպքում, եթե այն չի վնասում կրթահամալիրի հեղինակությանը:

IV. ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐԱԾ ՀԱՐՑՈՒՄՆԵՐ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

4.1. Ուսումնառության ընթացքում կրթահամալիրում սովորողները կարող են անցկացնել հարցումներ գիտահետազոտական աշխատանքների, մանկավարժական և ուսումնական պրակտիկայի, կուրսային աշխատանքների, մագիստրոսական ատենախոսությունների շրջանակներում և այլ ոլորտներում:

4.2. Հարցումների անցկացման համար սովորողները պետք է կազմեն հարցաշար, որն ուսումնասիրվում և հաստատվում է ուսանողի ղեկավար հանդիսացող դասախոսի կողմից:

4.3. Հարցումների անցկացումը սովորողը համաձայնեցնում է համապատասխան ստորաբաժանման ղեկավարի և/կամ դասախոս/ների հետ, որի գործունեության տիրույթում պատրաստվում է անցկացվել հարցումը: Համապատասխան ստորաբաժանման ղեկավարի պահանջով հարցում անցկացնող սովորողը ներկայացնում է հարցման ծրագիրը, հարցաշարը և անցկացման արդյունքները:

4.4. Հարցումների անցկացման և դրանց արդյունքների համար պատասխանատու է տվյալ ուսանողի հետազոտության անմիջական ղեկավար դասախոսը:

4.5. Սովորողների կողմից անցկացված հարցումների արդյունքները պարտադիր ներկայացվում են կրթահամալիրի կրթության որակի ապահովման բաժանմունք:

4.6. Սովորողները իրավունք ունեն ստացված արդյունքները հետազոտության անմիջական ղեկավար դասախոսի համաձայնությամբ ընդգրկել իրենց աշխատանքներում, ինչպես նաև հանդես գալ կոնֆերանսներում և տպագիր մամուլում տեղեկատվության էթիկայի պահպանմամբ, եթե այն չի վնասում կրթահամալիրի հեղինակությանը:

V. ՀԱՐՑՈՒՄՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՈՐԱԿԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ, ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ և ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄ

5.1. Հարցումները օգտագործվում են ուսումնասիրվող գործընթացի բարելավման, գնահատման, շահակիցների հետ հետադարձ կապի, նոր նախագծերի մշակման և այլ նպատակով:

5.2. Հարցումների անցկացումը որպես որակի մշտադիտարկման և գնահատման գործիք ներառում է հետևյալ մակարդակները՝

1) Կրթական գործընթացի բաղադրյալների ստուգումներ (անհամապատասխանությունների բացահայտում):
2) Արդյունքների մշակում, ներկայացում և վերլուծություն, հաշվետվությունների և առաջարկությունների պատրաստում:
3) Շահագրգիռ կողմերի և որոշում կայացնող մասնագետների տեղեկացում (նաև բացահայտված անհամապատասխանությունների մասով):
4) Անհամապատասխանությունների վերացմանն ուղղված գործողությունների մշակում և կառավարող փոխազդեցությունների ձևավորում դրանց իրականացմամբ որակի բարելավման համար:
5) Տվյալների հավաքագրումը իրականացվում է կարգի 2-րդ, 3-րդ, 4-րդ բաժիններում բերված հարցումների ձևերով: Հարցումը կարելի է կատարել թղթային, էլեկտրոնային ձևերով բուհի տարածքում կամ առցանց բուհից դուրս, ինչպես նաև ֆոկուս-խմբերի միջոցով:

5.3. Կրթահամալիրում չափման և մշտադիտարկման առարկա կարող է հանդիսանալ՝

1) Սովորողների գիտելիքների որակը (մակարդակը),
2) Դասավանդող անձնակազմի որակը և հմտությունները,
3) Ռեսուրսների և նրանց ապահովման որակը,
4) Կրթական ծառայությունների գործունության որակը,
5) Կառավարման համակարգի գործունեության որակը,
6) Այլ ոլորտ, եթե դա կարևորվում է ղեկավարության կողմից:

5.4. Տվյալների հավաքագրումը պետք է կատարվի ըստ նախապես մշակված պլանի և ձևաչափերի: Ըստ դրա կազմվում է անհամապատասխանությունների վերացման գործողությունների ժամանակացույց-պլան: Գործընթացի ընդանրացված նկարագրությունը ներկայացվում է քարտեզի միջոցով (հավելված)՝ ըստ քայլերի հաջորդականության:

VI. ՀԱՐՑԱՇԱՐԻ ՄՇԱԿՈՒՄ

Հարցաշարը մշակելիս ուշադրություն է դարձվում հարցերի բովանդակությունը և հաջորդականությունը:

Գործընթացը պահանջում է՝

1. հստակություն. դրված հարցերի առավելագույն ձևով պարզ և հասկանալի ներկայացումը,
2. խուսափել բազմաթիվ պատասխանների ներառումից,
3. բաց հարցերի մշակում՝ շահակիցների կարծիքը ստանալու համար բուհի կրթության որակի մասին,
4. բոլոր բանալի հարցերի ներառում՝ ստացված տեղեկատվության հավաստիության ապահովման համար,
5. բացառել հարցերը, որոնք կխանգարեն իրական վիճակի բացահայտմմանը:

Հարցման թերթիկներում հարցերը անհրաժեշտ է բաժանել խմբերի՝

1) բավարարվածությունը ուսումնական գործընթացից,
2) բավարարվածությունը բուհում տարվող գիտահետազոտական գործընթացներից,
3) բավարարվածությունը առկա ռեսուրսներից:

Հարցման թերթիկը պետք է ունենա հետևյալ կառուցվածքը՝

1) հարցման բնույթը և նպատակը,
2) ում կողմից է իրականացվում,
3) հարցերի ներկայացումը «պարզից –բարդ» կառուցվածքով,
4) բաց հարցեր,
5) տվյալների հրացմանը մասնակցողի վերաբերյալ (սեռ, տարիք և այլն),
6) Հարցերի պատասխանները պետք է մշակել գնահատման աճման կամ նվազման կարգով՝ հարցաթերթիկների արդյունքների վերլուծության արդյունավետությունը ապահովելու նպատակով:

6. Հարցման արդյունքների մշակում և վերլուծություն.

Տվյալ խնդիրը լուծելու նպատակով նախ և առաջ անհրաժեշտ է կատարել լրացված հարցման թերթիկների հարցերի վիճակագրական վերլուծություն հարցերի առանձին խմբերի համար (Excel կամ SPSS, Google forms, PSPP ծրագրերիի միջոցով): Այնուհետև կատարվում է մշակված տվյալների վերլուծություն, հիմնվելով տարբեր տիպի դիագրամների վրա: Վերլուծության հիման վրա կայացվում են որոշումներ կրթական որակի բարելավման ուղղությամբ ըստ առավել թույլ կողմերի:

VII. ԱՆԿԵՏԱՎՈՐՄԱՆ ԱԼԳՈՐԻԹՄ

Հետազոտությունների իրականացման ալգորիթմի ձևաչքիը ներկայացվում է ստորև.